ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆ (*«Երեխաները ցեղասպանության զոհեր»*).

Ամերիկահայ ցեղասպանագետ, սոցիոլոգիայի դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Դասախոսել է ԱՄՆ, Եվրոպայի և Հարավային Ամերիկայի մի շարք համալսարաններում: Իր ակադեմիական բեղուն գործունեությունը նվիրվել է հայկական ցեղասպանության պատմագիտական ուսումնասիրության հույժ կարևոր գործին:

Հեղինակ է տարբեր լեզուներով հրատարակված՝ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ հրատարակությունների, պատմագիտական, իրավաբանական խնդիրներին նվիրված ավելի քան 60 ակադեմիական հոդվածների:

Հանդես է եկել ցեղասպանության խնդիրներին նվիրված բազմաթիվ միջազգային գիտաժողովներին, բանավեճերին, հանդիպումներին:

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ (*«Հայկական հարցի շուրջ բանավեճը ռուսական մամուլում Հայոց ցեղասպանության տարիներին (1915-1917թթ.)»*).

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է հայ ժողովրդի նորագույն պատմության, մասնավորապես, Հայոց ցեղասպանության տարիներին Հայկական հարցում Ռուսաստանի քաղաքականության, ինչպես նաև հայ-ռուսական հարաբերությունների հիմնահարցերը:

Հեղինակն է «Ռուսաստանի Պետական Դուման և Հայոց ցեղասպանությունը 1915-1916թթ.» (Եր., 2001), «Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց ցեղասպանության մասին 1915-1916թթ.» (Եր., 2001) աշխատասիրությունների, Հայոց ցեղասպանության հիմնահարցերին առնչվող մի շարք հոդվածների:

Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում:

ՎԱԼԵՐԻ ԹՈՒՆՅԱՆ (*"Особая организация" в геноциде армян 1915г."*).

Պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոֆեսոր:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է հիմնականում 19-20-րդ դդ. սկզբին Հայաստանում և Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքականության (տնտեսություն, եկեղեցի, վարչական կառավարում, հայկական հարց) խնդիրները:

Հեղինակն է «Հայաստանը և Ռուսաստանը 1878-1897թթ.» (Եր., 1997), «Ռուսաստանը և հայկական հարցը» (Եր., 1998), «Ղարաբաղի բախումը» (Եր., 1999), «Հայկական հարցը ռուսական մամուլում 1900-1917թթ.» (Եր., 2000), «Հայոց եկեղեցու "Պոլսժենիան"» (Եր., 2001) աշխատությունների, բազմաթիվ գիտական հրապարակումների:

ՏԻԳՐԱՆ ՍԱԹՈՍՅԱՆ (*«Պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի գաղափարական ընդհանրությունները»*).

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի սաուլիդանոս:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է Հայոց մեծ եղեռնի և հրեական Հոլոքոստի պատմության խնդիրների ուսումնասիրումը: Թեկնածուական ատենախոսության թեման է «Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի պատմաքննական համեմատությունը»:

ՌՈԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ (*«Վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 (աղբյուրների համադրության և վերլուծության փորձ)»*).

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Զբաղվում է Օսմանյան կայսրության XIXդ. վերջին և XXդ. սկզբին հայ բնակչության ժողովրդագրական վիճակագրական խնդիրների ուսումնասիրությամբ: Թեկնածուական թեզի թեման է՝ «Հայ բնակչության թվաքանակը Օսմանյան կայսրությունում 1878-1914թթ.»:

Հեղինակ է խնդրո առարկա թեմայով հոդվածների, մասնակցել է մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ (*«Берлинский процесс и Иоганнес Лепсиус»*).

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և հայ-ռուսական հարաբերությունների պատմության բաժնի վարիչ, տեղեկատվության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, հայերի համաշխարհային համերաշխության կազմակերպության փոխպրեզիդենտ:

Հեղինակ է տարբեր լեզուներով հրատարակված երկու տասնյակ մենագրությունների ու գրքերի («Ազգային քաղաքականության սկզբունքները», ռուսերեն, (1967), «Հայաստանը Գերմանիայի քաղաքականության մեջ», ռուսերեն, (1975), «Կայզերական Գերմանիայի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ Առաջին աշխարհամարտի ժամանակ», գերմաներեն, (1979), «Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին», հ. 1, ռուսերեն, (1991), «Թալեաթ փաշայի դատավարությունը», ռուսերեն, (1992), «Հայոց ցեղասպանությունը», (1995), «Արմին Վեգները և Էրնստ Վերները հայերի ցեղասպանության մասին», (1996), «Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը» (1998) և այլն), ավելի քան 500 գիտական ու հրապարակախոսական հոդվածների:

Աշխատել է գերմանական արխիվներում, որոնցում հայտնաբերված փաստաթղթերի ու նյութերի հիման վրա հրատարակել է մի շարք աշխատություններ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին:

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ (*«Ջեյմս Բրայսի հայանպաստ գործունեությունը 1876-1914թթ.»*).

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Գիտական հետազոտությունների շրջանակը՝ հայ ժողովրդի նորագույն պատմության հիմնահարցերը, մասնավորապես, Մեծ եղեռնի տարիներին Մեծ Բրիտանիայում ծավալված հայանպաստ շարժման լուսաբանումը: Թեկնածուական ատենախոսության թեման է «Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում 1914-1923թթ.»:

Հեղինակ է «Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում ըստ վավերագրերի (1918-1923թթ.)» աշխատասիրության:

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՅԱՆ (*«Հայկական հարցը և Հայոց եկեղեցին 1877-1878թթ.»*).

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Ավարտել է Մուրատ-Ռաֆայելյանի վարժարանը (Վենետիկ), ապա Տրիեստի համալսարանը՝ դիվանագիտության և միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ դարասկզբի Հայկական հարցի և հայ եկեղեցու առնչումների հիմնահարցերը:

Թեկնածուական ատենախոսության թեման է «Հայոց եկեղեցին և Հայկական հարցը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում (1912-1918թթ.)»:

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (*«Հայերի ցեղասպանությունը և Նոր Նախիջևանի հայկական գաղութը»*).

Բանասիրական գիտությունների թեկնածու, գրականագետ, ՀՀ Ազ-

գային ժողովի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ:

Մի շարք գրքերի, մասնավորապես՝ «Ցեղասպանությանը և Ռուսաստանի հայ մտավորականությունը», ռուսերեն, (2003), 100-ից ավելի հայ և ռուս գրականությանը, պատմությանը և մշակույթին վերաբերող հոդվածների հեղինակ է:

Հանդես է եկել հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներին:

ՄԵՐԻ ՔԵՇԻՇՅԱՆ (*«Հայկական մշակութային հուշարձանների նիստը Օսմանյան Թուրքիայի տարածքում»*).

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության հայցորդ:

Զբաղվել է Օսմանյան Թուրքիայի տարածքում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների գենոցիդի հարցով:

Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

ВОПРОСЫ ИСТОРИИ И ИСТОРИОГРАФИИ ГЕНОЦИДА АРМЯН

THE ISSUES OF THE HISTORY AND HISTORIOGRAPHY OF THE ARMENIAN GENOCIDE